

Հոկտեմբերը Հայ ժողովրդի պատմության մեջ

1 հոկտեմբեր

1387 Երկու տարի Հայաստանը ասպատակելուց հետո Լենկ-Թեմուրը վերադառնում է Սամարղանդ:

1827 Ռուսական զորքերը գրավում են Երևանի բերդը:

1846 Վերաբացվում է Սյուրբարի ճեմարանը:

1878 Ծնվեց հայ ականավոր մարքսիստ, հեղափոխական Ստեփան Շահունյանը: (Վախճ. 1918թ.-ին):

1921 Կ. Պոլսում ստեղծվեց Ռամկավար ազատական կուսակցությունը:

1942 408-րդ հայկական հրաձգային գումարտակը արյունահեղ մարտեր է մղում գերմանա-ֆաշիստական զորքերի դեմ Նովորոսիսկի, ապա Տուապետի շրջաններում:

2 հոկտեմբեր

1992 Լիովին ձախողվեց հյուսիս-արևելքից ԼՂՀ Մարտունի քաղաքի վրա ձեռնարկված ադրբեջանական զանգ վաճառի հարձակումը:

3 հոկտեմբեր

1877 Ռուսական զորքերը գեներալ Լազարևի գլխավորությամբ Ալաշայի բարձունքներում Դարսի մոտ ջախջախում են Սուխտար փաշայի թուրքական բանակը:

1926 Մահացավ երգիծաբան Երվանդ Օտյանը:

4 հոկտեմբեր

1837 Գյումրիին վերանվանվում է Ալեքսանդրապոլ (Խորհրդային տարիներին Լենինական, անկախությունից հետո Կումայրի ապա Գյումրի):

1925 Վախճանվեց ականավոր նկարիչ Գևորգ Բաշինջաղյանը: (Ծնվ. 1857թ.-ին):

1992 Չախողվեց Լաչինի միջանցքը գրավելու ադրբեջանցիների փորձը:

5 հոկտեմբեր

1895 Հայերի զանգվածային ջարդեր Բաբերդում, Տրապիզոնում, Դերջանում, Երզնկայում, Չարսանջակում, Կամախում, Քղում, Ուրֆայում (Եդեսիա), Շապին-Գարահիսարում, Կարինում, Խարբերդում, Մալաթիայում, Մարզվանում, Դիարբեքիում (մինչև նոյեմբերի 1-ը):

1946 Հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի արձանի հանդիսավոր բացումը Քանաքեռում:

6 հոկտեմբեր

-69 Տիգրանակերտի ճակատամարտը:

640 Դվինի գրավումը և կողոպուտը արաբների կողմից:

1827 Ստեղծվում է Երևանի ժամանակավոր վարչությունը:

1928 Տեղի է ունենում Երևանի բանվորական համայնարանի հանդիսավոր բացումը:

1935 Մահացավ արևելահայ մանկագիր Խնկո Ապերը (Աթաբեկ Խնկոյանը): (Ծնվ. 1870թ.-ին):

7 հոկտեմբեր

1874 Ծնվեց քաղաքագետ Վինսթոն Չրչիլը, որը 1924 թ.-ին հայերի ցեղասպանությունը բնութագրեց ինչպես անենախոշոր ռասսայական բնաջնջում: (Վախճ. 1965թ.-ին):

8 հոկտեմբեր

1920 Հրապարակվում է ՀԿԿ Կենտկոմի որոշումը դաշնակցական կառավարությունը տապալելու մասին:

9 հոկտեմբեր

1926 Արտասահմանից Երևան է վերադառնում անվանի բանաստեղծ Ավ. Իսահակյանը:

1943 Թամանյան թերակղզու ազատագրման համար մղված մարտերում առավել աջքի բնկնելու համար, Գեդազունյան գլխավոր հրամանատարության հրամանով, 89-րդ հայկական հրաձգային գումարտակին շնորհվում է Թամանյանի կոչումը:

10 հոկտեմբեր

1808 Թուրքական մեծ սադրագամ Յուսուֆ փաշան հրապարակում է այլադավան հպատակների քաղաքական իրավունքները սահմանափակող մի հրամանագիր:

1897 Թուրքական կառավարության կարգադրությամբ փակվեցին Թուրքիայում հրատարակվող հայ պարբերականների զգալի մասը:

11 հոկտեմբեր

1920 Դաշնակցական կառավարության հետ բանակցություններ վարելու նպատակով Երևան է

ժամանում Խորհրդային Ռուսաստանի պատվիրակությունը Բ. Լեգրանը:

1967 Վախճանվեց նավատորմի ծովակալ Իվան Իսակովը: (Ծնվ. 1894թ.-ին):

12 հոկտեմբեր

1813 Դարաբաղի Գյուլիստան ամրոցում ստորագրվում է ռուս-պարսկական հաշտության պայմանագիրը, որի համաձայն Պարսկաստանը ճանաչում է Դարաբաղի, Գյանջայի, Շաքիի, Շիրվանի, Բաքվի, Դերբենդի, Դուբայի, Թալիշի խանությունների, Լոռու, Փամբակի, Շամշադինի, Ջանգեզուրի և Շորազայի գավառների միացումը Ռուսաստանին:

1895 Ձեյթունում ապստամբություն բռնկվեց:

1962 Սկսվում է արտասահմանյան երկրներում ապրող հայերի նոր ներգախթը Խորհրդային Հայաստան:

13 հոկտեմբեր

1668 Աստվածաշնչի առաջին հայերեն տպագրությունը:

1827 Ռուսական զորքերը գրավում են Թավրիզը:

1829 Կեսարիայի կառավարիչ Քեոսե փաշան հարձակվում է Ձեյթունի վրա, սակայն պարտվում և ետ է շարտվում:

1837 Հայաստան է այցելում ռուսական կայսր Նիկոլայ I-ը:

1921 Մի կողմից Հայաստանի, Սղոբեջանի ու Վրաստանի, իսկ մյուս կողմից Թուրքիայի միջև կնքվում է Կարսի պայմանագիրը:

1992 ՀՀ և ԼՂՀ կառավարությունների համատեղ ջանքերով ստեղծվեց Արցախի պետական համալսարանը:

14 հոկտեմբեր

1280 Գլաձորի համալսարանի հիմնադրումը:

1794 Հիմնադրվեց առաջին հայկական թերթը՝ «Ազդարար»-ը, Հարություն քահանա Շամվոնյանի խմբագրությամբ:

1903 Հնչակյանները մահափորձ կազմակերպեցին Գուլիցինի դեմ:

1967 Մահացավ հայ անվանի գրող Ստեփան Ջորյանը: (Ծնվ. 1890թ.-ին):

15 հոկտեմբեր

1809 Քանաքեռում ծնվեց հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը: Անհետացավ 1848թ.-ին ապրիլի 2-ին:

16 հոկտեմբեր

1991 Հայաստանի Հանրապետության նախագահ ընտրվեց Լևոն Տեր-Պետրոսյանը:

17 հոկտեմբեր

1895 Ցարական կառավարությունը ձերբակալեց Դ. Աղայանին և Ալ. Շիրվանզադեին:

1957 Երևանում մահացավ մեծանուն գրող Ավետիք Իսահակյանը (Ծնվ. 1875թ.-ին):

18 հոկտեմբեր

1968 Նշվեց Երևանի հիմնադրման 2750-ամյակը:

19 հոկտեմբեր

1870 Ծնվեց հայ մանկագիր, ուսուցիչ Աթաբեկ Խնկոյանը: (Վախճ. 1935թ.-ին):

20 հոկտեմբեր

1865 Հայկական թատրոնի հիմնումը Երևանում:

1920 Արյունահեղ կռիվներ տեղի ունեցան Սուրմալուի ճակատամարտում, որոնք տևեցին մինչև հոկտեմբերի 26-ը: Հայկական զորքը Դրոյի հրամանատարությամբ ջախջախիչ հարված հասցրեց թուրքերին և նրանք նահանջեցին:

21 հոկտեմբեր

1978 Վախճանվեց Կոմունիստական կուսակցության և Խորհրդային պետության ականավոր գործիչ Անաստաս Միկոյանը: (Ծնվ. 1895թ.-ին):

22 հոկտեմբեր

1924 Երևան է ժամանում նշանավոր կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանը:

1926 Լենինականում տեղի ունեցավ 8-9 բալանոց երկրաշարժ: Այն ընդգրկեց 45 քառ.կմ տարածք: Տներն ավերվեցին, եղան նաև մարդկային զոհեր:

1935 Փարիզում վախճանվեց Կոմիտասը (Սողոմոն Սողոմոնյանը), աճյունը փոխադրվեց Երևան 1936թ.-ին:

23 հոկտեմբեր

1929 Երևանում վախճանվեց ՀԽՍՀ ժողովրդական նախագահի տեղակալ և լուսժողովու Ասքանազ Մռավյանը: (Ծնվ. 1885թ.-ին):

24 հոկտեմբեր

1993 Դեպի Յորդանիա քաղաք վճռական հարձակումով, արցախյան բռնակր ղուրս ելավ Արաբսի ափ՝ իր վերահսկողության տակ վերցնելով իրանական սահմանի 160 կմ-ոց հատվածը:

25 հոկտեմբեր

1917 Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակը (նոյեմբերի 7 նոր տոմարով) Ռուսաստանում:

26 հոկտեմբեր

1963 Մեծ հանդիսավորությամբ նշվում է Սայաթ-Խովայի ծննդյան 250-ամյակը:

27 հոկտեմբեր

1999 Ամենայն հայոց կաթողիկոս ընտրվեց Գարեգին արք. Ներսիսյանը (Գարեգին Բ): Նա դարձավ հայոց 132-րդ հայրապետը:

1999 Արյունալի հաշվեհարդար տեղի ունեցավ ՀՀ Ազգային ժողովում: Սպանվեցին ՀՀ վարչապետ Վազգեն Սարգսյանը, ՀՀ Ազգային ժողովի նախագահ Կարեն Դեմիրճյանը և այլ քաղաքական այրեր:

28 հոկտեմբեր

1922 ՌՍՖՍՀ Աշխատանքի և պաշտպանության խորհուրդը Վ. Ի. Լենինի նախագ առթիվ քննում է խորհրդային Հայաստանին ֆինանսական օգնություն ըստ յուրու իրարը և որոշում Հայաստանին քաղ թողնել մեկ այլ 1,5 միլիոն ռուբլի (ոսկով) գյուղատնտեսական գործիքներ, մեքենաներ և անասուններ ձեռք բերելու համար:

29 հոկտեմբեր

1907 Էքսիհանում մահացավ կաթողիկոս Սկրտիչ իրիմյանը: (Ծնվ. 1820թ.-ին):

1949 Փարիզում վախճանվեց փիլիսոփա Գևորգ Գյուրջյանը (Գևորգ Գյուրջիս): Ծնվել է 1877թ. Գյումրիում:

30 հոկտեմբեր

1875 Ալեքսանդրապոլում ծնվեց հայ գրականության դասական բանաստեղծ Ավետիք Իսահակյանը: (Վախճ. 1957թ.-ին):

1920 Թուրքերը գրավում են Կարսը:

Նոյեմբերը Հայ ժողովրդի պատմության մեջ

1 նոյեմբեր

1871 Ծնվեց հայ կոմպոզիտոր, դիրիժոր, մանկավարժ Ալեքսանդր Սպենդիարյանը: (Վախճ. 1928թ.-ին):

1899 Մահացավ ազգային ազատագրական շարժումների նշանավոր գործիչ Սերոբ Աղբյուրը (Սերոբ Վարդանյան):

1901 Արևմտյան Հայաստանում Անդրանիկի ջոկատի և թուրքական կանոնավոր զորամասերի միջև տեղի ունեցավ Առաքելոց վանքի կռիվը:

1928 Լենինականում բացվում է Հայաստանի պետական երկրորդ դրամատիկական թատրոնը:

2 նոյեմբեր

1829 Նոր Նախիջևան քաղաքում ծնվեց հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանը: (Վախճ. 1866թ.-ին)

5 նոյեմբեր

1920 Թուրքերը գրավում են Ալեքսանդրապոլը:

1932 Տեղի է ունենում Երևանի երկրորդ հիդրոկայանի հանդիսավոր բացումը:

1934 Բացվում է Լենինականի մանկավարժական ինստիտուտը:

1958 Գործարկվեց Աթաբեկյանի հիդրոէլեկտրակայանը:

1967 Երևանում գործարկվեց էլեկտրոնային օդակաձև արագ աղուցիչը:

6 նոյեմբեր

1877 Ռուսական զորքը գեներալ Հովհաննես Լազարևի հրամանատարությամբ գրավում է Կարսը:

1879 Ալեքսանդրապոլում ծնվեց հայ նշանավոր կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանը: (Վախճ. 1950թ.-ին):

7 նոյեմբեր

1711 Մահացավ 17-րդ դարի Հայ Դատի ռահվիրա Իսրայել Օրին:

1857 Ծնվեց ակնավոր բանասեր, ակադեմիկոս Ստեփան Մալխասյանը: (Վախճ. 1947թ.-ին):

1922 Երևանում բացվում է պետական հանրային գրադարանը (1925 թվականից՝ Ա. Մյասնիկյանի անվան):

1922 Երևանում բացվում է պետական բանագրանի հնագիտական, ազգագրական, պատմական, գեղարվեստական, հեղափոխական և արխիվային բաժիններով:

1924 Շարք է մտնում Ղափանի պղնձաձուլարանը:

1932 Տեղի է ունենում Մինջևան-Ղափան երկաթուղու բացումը:

8 նոյեմբեր

1830 Նոր Նախիջևան քաղաքում ծնվեց Ռաֆայել Պատկանյանը: (Վախճ. 1892թ.-ին):

1928 Երևանում տեղի է ունենում Անդրկովկասի անասնաբուժական ինստիտուտի հանդիսավոր բացումը:

2000 Ֆրանսիայի Ազգային ժողովը ճանաչեց հայոց ցեղասպանությունը Օսմանյան կայսրության կողմից: Ֆրանսիայի սենատը ընդունեց 1915թ. հայկական ցեղասպանության բանաձևը:

2001 Մահացավ լուսանկարիչ Մալաք Կարշը: Նա լուսանկարիչ Յուսուֆ Կարշի եղբայրն էր: Մալաք Կարշը ճանաչված էր Կանադական մեկ դուլարի վրա Կանադայի խորհրդարանի իր կատարած լուսանկարի համար: (Ծնվ. 1915թ.):

9 նոյեմբեր

1901 Վենետիկում վախճանվեց հայագետ, Մխիթարյան Միաբանության անդամ Ղևոնդ Ալիշանը: (Ծնվ. 1820թ.-ին):

1999 Եվրախորհրդի նախարարների հանձնաժողովը ընդունեց Հայաստանը որպես Եվրախորհրդի լիիրավ անդամ:

10 նոյեմբեր

1912 Կաթողիկոս Գևորգ V-ը ստեղծեց «Ազգային պատվիրակություն» Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ Հայկական հարցը ռուս և եվրոպական դիվանագիտության առջև բարձրացնելու համար:

1914 Թուրքական զորքերի պարտությունը Էրզրումի տակ:

1914 Բրիտանիայի վարչապետ Դեյվիդ Լոյդ Ջորջը ներկայացրեց թուրքերին այսպես. «... մարդկային քաղցկեղ, սողացող տագնապ վատ կառավարված հողերի համար, ովքեր կործանում են կյանքի յուրաքանչյուր թելը ովքեր ... պետք է պատասխան տան մարդկության հանդեպ կատարած անթիվ ստորությունների համար»:

11 նոյեմբեր

1118 Ծնվել է Վերածննդի դարաշրջանի հայ դասական, բժիշկ Մխիթար Հերացին:

1949 Գործարկվեց Սևանի ստորերկրյա հիդրոէլեկտրակայանը:

1983 Վախճանվեց հայ նշանավոր կոմպոզիտոր, դաշնակահար Առնո Բաբաջանյանը: (Ծնվ. 1921թ.-ին):

14 նոյեմբեր

1765 Ծնվեց ռուսական բանակի գեներալ, իշխան Պետրոս Բագրատյանը: (Վախճ. 1812թ.-ին):

1878 Ծնվեց ակնավոր բուշակի, պրոֆեսիոնալ հեղափոխական Բոգդան Կնունյանցը: (Վախճ. 1911թ.-ին):

1932 Երևանում վախճանվեց ակնավոր պատմաբան Լեոն (Առաքել Բաբախանյանի): (Ծնվ. 1860թ.-ին, Շուշիում):

16 նոյեմբեր

1855 Ռուսական զորքերը գրավում են Ղարսը:

17 նոյեմբեր

1937 Թիֆլիսում վախճանվեց գրող Հակոբ Հակոբյանը: (Ծնվ. 1866թ.-ին, (Գանձակ) Ելիզավետպոլում):

1957 Շահագործման է հանձնվում Երևան-Ախտա (այժմ Հրազդան) երկաթուղագիծը:

18 նոյեմբեր

1823 Կ. Պոլսում վախճանվեց պատմաբան Միքայել Չամչյանը: (Ծնվ. 1738թ.-ին):

1908 Ծնվեց Կիկոտր Համբարձումյանը (1908-1996), աստղաֆիզիկոս, ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահ:

1931 Մահացավ Շեքսպիրի թարգմանիչ Հովհաննես Խան Մասեմյանը:

19 նոյեմբեր

1918 Կ. Պոլսում վախճանվեց հասարակական-քաղաքական գործիչ, բանասեր, պատմաբան, Պոլսի

հայոց պատրիարք Մաղաքիա Օրմանյանը: (Ծնվ. 1841թ.-ին):

20 նոյեմբեր

1923 Երևանում բացվում է նախկին շարքային դաշնակցականների համահայաստանյան հիքնալիկվիդացիոն համագումարը:

1944 Հիմնադրվում է արտասահմանի հետ մշակութային կապի հայկական ընկերությունը (ԱՕԿՍ):

21 նոյեմբեր

1839 «Թանգիմաթի» հրատարակումը, որը թուրքիայի քրիստոնեությանը շնորհում է խղճի ազատության սկզբունք և այլ քաղաքական իրավունքներ: (կրկնություն-ID 686)

1945 ԽՍՀՄ ժողովրդական օրոշումը արտասահմանյան հայերի հայրենադարձություն կազմակերպելու մասին:

22 նոյեմբեր

1965 Մահացավ երգ իծաբան Լեո Կամսարը: (Ծնվ. 1889 թ.):

1980 Սահմանվեց Մեսրոպ Մաշտոցի, Պետրոս Ադամյանի, Անանիա Շիրակացու, Խ. Աբովյանի, Մ. Սարյանի և Կոմիտասի անվան մրցանակներ մշակույթի և գ իտության սփյուռքահայ առաջադեմ գ ործիչներին շնորհելու մասին:

1988 Հայկական ՍՍՀ Գերագ ույն խորհուրդը օրենք ընդունեց «Օսմանյան թուրքիայում հայերի 1915թ.-ի ցեղասպանության դատապարտման մասին»:

1993 Դրամաշրջանառության մեջ մտավ ազգ ային նոր դրամային միավոր՝ «դրամ»-ը:

23 նոյեմբեր

1735 Ծնվեց ազատագրական շարժման ռահվիրա Հովհաննես Լազարյանը:

1918 Հայաստանի Հանրապետության բանակը գրավեց Ալեքսանդրապոլը:

24 նոյեմբեր

1920 Ընկնում է դաշնակցական հին կառավարությունը և կազմվում է նոր կառավարություն Ս. Վրացյանի նախագ առությամբ:

1940 Հիմնադրվում է Երևանի կենդանաբանական այգ ին:

1996 Ռոբերտ Քոչարյանը վերընտրվեց Արցախի նախագահ: Ընտրություններին ակնատես էին միջազգ ային դիտորդները:

25 նոյեմբեր

1895 Ալավերդու շրջանի Սանահին գյուղում ծնվեց Կոմունիստական կուսակցության և խորհրդային պետության ականավոր գործիչ Անաստաս Միկոյանը: (Վախճ. 1978 թ.):

26 նոյեմբեր

1873 Ախալցխայում ծնվեց հայ պատմաբան, բանասեր, աղբյուրագետ Հակոբ Մանանդյանը: (Վախճ. 1952թ.-ին):

1916 Ֆրանսիայի կառավարությունը որոշեց կոտորածներից ազատված հայ տարագ իրներից կազմել կամավորական Արևելյան Լեգեոնը, որը կռվելու էր թուրքիայի դեմ և դառնալու էր ապագա հայկական բանակի կորիզը Կիլիկիայում: (Լուծարքի ենթարկվեց 1920 թ. սեպտեմբերի 27-ին):

28 նոյեմբեր

1967 Երևանում տեղի ունեցավ Ծիծեռնակաբերդի բարձունքի վրա կառուցված 1915 թ. Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշարձան-կոթողի բացումը:

1974 Շահագ ործման հանձնվեց Երևանի «Ռոսիա» կինոթատրոնը:

29 նոյեմբեր

1920 Հայաստանում հաստատվում է խորհրդային իշխանություն:

1926 Տեղի է ունենում Երևանի ձեթ-օձառի և փայտամշակման գ ործարանների հանդիսավոր բացումը:

1929 Բացվում է Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնը:

1933 Տեղի է ունենում Կիրովականի քիմիական կոմբինատի և Դավալուի ցեմենտի գ ործարանի բացումը:

1937 խորհրդային ոստիկանության կողմից սպանվեց հայ բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ և քննադատ Եղիշե Չարենցը: (Ծնվ. 1897թ.-ին):

1939 Կաթողիկոս Գևորգ 6-րդը դիմեց ԽՍՀՄ-ին, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի կառավարություններն խորհրդային Հայաստանին միացնելու թուրքիայի տարածքում գտնվող Արևմտյան Հայաստանի հողերը:

1943 Հայկական ԽՍՀ գ իտությունների ակադեմիայի հանդիսավոր բացումը:

30 նոյեմբեր

1920 Ադրբեջանի խորհրդականացված կառավարությունը Արցախը ճանաչեց որպես Հայաստանի մի մաս, սակայն մի քանի օր անց փոխեց իր որոշումը:

Լուրեր

Իրանահայ համայնք

Ծախճանվեց Վիգենը

BBC-ի հաղորդմամբ Իրանի ժողովրդական ջազ երաժշտության հիմնադիր անվանի երգիչ Վիգենը (Տերտերյան) Երկարատեղ հիվանդությունից հետո, կիրակի հոկտեմբերի 26-ին Լոս Անջելեսի ժամով կ.հ. 1:30-ին իր մահկանացուն կնքեց Ամերիկայում:



Վիգենը իր դուստր՝ Ժաքլինի հետ

Վիգենը որպես Իրանի ջազ երաժշտության հիմնադիր՝ իրանցիների ամենասիրված երգիչներից մեկն է եղել, որի երգերը դեռ լսվում են մինչև այսօր: Վիգենը կյանքին հրաժեշտ տվեց 74 տարեկան հասակում:

Անվանի երաժիտ Աթա-օլլա Խոռամը այսպես է արտահայտվել.«Վերջին 50 տարիների ընթացքում Վիգենը անզուգական էր եւ մինչեւ 50 տարի հետո էլ Իրանը այնպիսին չի ունենալու:

- Դիեի խնդրով Իսլ. խորհրդարանում կրոնական փոքրամասնությունների պատգամավորները մամակ են հղել Համակարգի նպատակայարմարությունը բնորոշող ժողովի պետին

Տեղեկանում ենք, որ թվականիս հոկտեմբերի 8-ին Իսլամական խորհրդարանում կրոնական փոքրամասնությունների պատգամավորների ստորագրությամբ մի մամակ է հղվել Համակարգի նպատակայարմարութիւնը բնորոշող ժողովի պետ Հաշեմի Ռաֆսանջանիին: Նամակում նշած է, թե կրոնական փոքրամասնությունների արյան գնի (դիե) հավասարեցման նախագիծը, որ երկու անգամ Պահապան խորհուրդը մերժել է, հաստատվել է Իսլ. խորհրդարանի Իրավական ու դատական հանձնաժողովի կողմից եւ վերջնական որոշման համար հանձնվել Համակարգի նպատակահարմարությունը բնորոշող ժողովին:

Նամակի այլ բաժնում նշված է, որ Հաշեմի Ռաֆսանջանիի հետ կրոնական փոքրամասնությունների պատգամավորների հանդիպման ընթացքում նա խոստացել է նպաստել նախագիծ իրագործմանը: Նամակի վերջում պատգամավորները խնդրամատույց են եղել, որ վերահաստատվեն տրվի հիշյալ խնդրին, որպեսզի այդ առումով վերանան կրոնական փոքրամասնությունների մտահոգությունները:

- Կատարվեց Նոր Ջուղայում հայերի հաստատման 400-ամյակի նշան հանդիսության պաշտոնական բացումը

Նոր Ջուղայում հայերի հաստատման 400-ամեակի հանդիսութանց նշան պաշտոնական բացումը կիրակի, 19 հոկտ. երեկոյան ժամը 5.00-ին, Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքում, ուր եւ մատուցվեց սուրբ եւ անմահ պատարագ մասնակցությամբ քահանա հայրերի, ազգային իշխանության ներկայացուցիչների, Ս. Ա. վանքի «Կոմիտաս» ու «Տաթև» երգչախմբերի եւ հոծ թվով հավատացյալ ժողովրդի:

Իրան

- Իր մահկանացուն կնքեց Իրանի ժամանակի դերասան Ռեզա Բեյքիմանվերդին

Իրանի կինոյի ժամանակի դերասան Ռեզա Բեյքիմանվերդին իր մահկանացուն կնքեց ԱՄՆ-ի հիվանդանոցներից մեկում: 67-ամյա դերասանը իր մահկանացուն կնքեց թոքի քաղցկեղի պատճառով: Նա 1960-70-ական թվականներին իրանական շուրջ 30 ֆիլմերում առաջին դերում է հանդես եկել: Բեյքիմանվերդին Իրանից բացի հանրաճանաչ էր նաեւ Թուրքիայում եւ արաբական երկրներում:



- 2003 թվականի Խաղաղության նոբելեան մրցանակը շահեց իրանցի կին փաստաբան Շիրին Էբադին

«Ռոյտեր» - Մարդու իրավունքների պաշտպանության համար իրանցի փաստաբան տկն. Շիրին Էբադինի ցուցաբերած ջանքերը նրան արժանացրեց 2003 թ. Խաղաղության նոբելյան մրցանակին:




- ՄՈՂԱՄԱՎԻ ԽԱԹԱՄԻ. ԻՐԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Ե ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՇԱՅՏՐԻՆ

ԹԵՐՐԱՆ, 9 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Թեհրանի եւ երեւանի հարաբերությունների զարգացումը համապատասխանում է երկու երկրների ժողովուրդների, տարածաշրջանի բոլոր երկրների շահերին եւ ուղղված է որեւիցե տարածաշրջանային պետության դեմ: Այդ մասին Իրանի նախագահ Մոհամմադ Խաթամին հայտարարել է այցով այստեղ գտնվող Հայաստանի էներգետիկայի նախարար Արմեն Մովսիսյանի հետ չորեքշաբթի օրը Թեհրանում կայացած հանդիպմանը: Տարածաշրջանի կայունությունն ու հանգստությունը չափազանց կարևոր են նրա բոլոր պետությունների համար, նշել է նախագահը, ավելացնելով, որ «Թեհրանը եւ Երեւանը դեմ են տարածաշրջանում օտարերկրյա ուժերի ներկայությանը»: Օտարերկրյա ներկայությունը, թե օկուպացման տեսքով, թե անվտանգության ապահովման համար, կհանգեցնի միայն տարածաշրջանի իրավիճակի ապակայունացման, կարծիք է հայտնել Մոհամմադ Խաթամին: «Առաջադիմություն եւ զարգացում են անհրաժեշտ տարածաշրջանի բոլոր պետությունների համար, իսկ դա պահանջում է խաղաղություն ու կայունություն», ասել է Մոհամմադ Խաթամին: Նա հույս է հայտնել, որ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ առկա խնդիրները կկարգավորվեն փոխըմբռնման ճանապարհով եւ բարի կամքի հիման վրա:

Հայաստան

- ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՇՆՈՐՀՎԵԼ Ե ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԱՄՊԵՏԻ ԿՈՉՈՒՄ

ԵՐԵՎԱՆ, 13 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Աշխարհի ասպետների միջազգային միությունը գիտության եւ արվեստի ասպետի կոչում է շնորհել ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պրեզիդենտ Ֆադեյ Սարգսյանին:



Այսօր ԳԱԱՆում Եվրոպայի բնական գիտությունների եւ հոգեւոր ընդհանրության ակադեմիայի Հայաստանի մասնաճյուղի նախագահ Ռաֆայել Մելիք-Օհանջանյանը եւ Աշխարհի ասպետների միջազգային միության անդամներ, ՌԴ բնական գիտությունների ակադեմիայի նախագահ Գեորգի Տրապեզնիկովը եւ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդ Նավասարդ Եպիսկոպոս Կճոյանը Ֆ. Սարգսյանին հանձնեցին միջազգային ասպետի դիպլոմն ու թիկնոցը:

Աշխարհի ասպետների միջազգային միությունը, որի կենտրոնը գտնվում է Գերմանիայում, ստեղծվել է Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Գ. Տրապեզնիկովի խոսքերով, այս կոչումը տրվում է միջազգային հանրության անունից, եւ միության տարբեր երկրների ներկայացուցիչներն այս տարի միաձայն քվեարկել են միջազգային ասպետի կոչումը հայ գիտնականին շնորհելու օգտին:

Ի դեպ, Հայաստանում միջազգային ասպետի կոչում մինչ օրս շնորհվել էր միայն Նավասարդ Եպիսկոպոս Կճոյանին:

Ռ. Մելիք-Օհանջանյանը գիտության եւ արվեստի բնագավառներում ներդրման համար Պետրոս Առաջինի շքանշանով պարգևատրեց Գ. Տրապեզնիկովին եւ Նավասարդ Եպիսկոպոս Կճոյանին:

Եվրոպայի բնական գիտությունների եւ հոգեւոր ընդհանրության ակադեմիայի կողմից գիտության մեջ ներդրման համար պարգևատրվեցին նաեւ մի շարք գիտնականներ եւ բարերարներ:

- ԱՏԵՂԾՎԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԿՈՍՈՆԻՒՍՏԱԿԱՆ ԿՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ԵՐԵՎԱՆ, 11 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հայաստանի նորացված կոմունիստական,

Հայաստանի «Կոմունիստների միություն» եւ Հայաստանի կոմունիստական ուղղվածության ինտելեկտուալների



կուսակցություններն այսօր գումարած համատեղ համագումարում միավորվեցին ստեղծելով Հայաստանի միավորված կոմունիստական կուսակցությունը:

Երեք կուսակցությունների ղեկավար մարմինների ներկայացուցիչներն իրենց զեկուցումներում կարելու էր հիշատակել այս քայլը սոցիալիստական երկիր կառուցելու ճանապարհին անպատվաբեր համարելով այն հանգամանքը, որ Հայաստանում կոմունիստական գաղափարախոսությունը մի քանի կուսակցությունների կողմից է ներկայացվում: Նրանց խոսքերով, միավորման գործընթացն այսօր չի

ավարտվում, այն կշարունակվի այնքան ժամանակ, մինչև որ մեկ կուսակցության մեջ համախմբված բոլոր կոնունիստները: Ըստ Նորացված կոնունիստական կուսակցության կենտկոմի արաջին քարտուղար Յուրի Մանուկյանի, կուսակցությունների միավորումը ուժերի ցուցադրության ստուգատես չէ, այլ քաղաքական քայլ, քաղաքական համոզմունքի, հաստատականության ներդրում «մոբիլիզացնելու կոնունիստական ուժերին սոցիալիզմի համար տարվող պայքարը թեժացնելու համար»: «Մենք գալիս ենք ոչ թե անհատների, մի խումբ մարդկանց շահերը պաշտպանելու, այլ մասսաների, զանգվածների խնդիրները լուծելու համար», ասաց նա:

Համագումարն ընտրեց հանձնաժողով ՅՄԿԿ ծրագիրն ու կանոնադրությունը նշակելու համար: Այն նաև արաջարկություններ կներկայացնի կուսակցության կենտկոմի ու վերստուգիչ հանձնաժողովի կազմի վերաբերյալ: Մինչև կուսակցության ղեկավար մարմինների ձևավորումը, կուսակցության ղեկավարությունը կստանձնի համագումարի մտադաստիությունը, որի կազմում են նաև երեք կուսակցությունների արաջնորդները:

Ինչ վերաբերում է նոր կուսակցության ղեկավար մարմնի ձևավորմանը, ապա, օրինակ, ՅՄԿԿ քարտուղար Հրամո Ոսկանյանը կողմ է համանախագահության սկզբունքին:

• ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՅՎԱԿԱՆ ԿԱԶՄԱՎԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵ ԱՐԴԵՆ ԻՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ Է

Հոկտոմբերի 8-ին Մոսկվայում տեղի ունեցած Համաշխարհային հայկական կազմակերպության (ՀՀԿ) հիմնադիր համագումարից հետո Երեւան ժամանեց Արա Աբրահամյանի պատվիրակությունը «Հայաստանում Ռուսաստանի հայերի միության օրեր» ծրագրին մասնակցելու: Այդ կապակցությամբ Համաշխարհային հայկական կազմակերպության նորընտիր նախագահը «Երեւան» հյուրանոցում ասուլիս էր կազմակերպել:



Բնականաբար, ասուլիսը սկսվեց ոչ թե ծրագրի մասին հարց ու պատասխանով, այլ լրագրողների խնդրանքով պրն Աբրահամյանը ներկայացրեց համագումարի ընթացքը:

Համագումարը, ըստ Արա Աբրահամյանի, անցել է բավականին հաջող: Մինչև համագումարը կազմակերպության ստեղծման կազմկոմիտեն գումար էլ էր վերջին միսրը, մտցվել են վերջին ճշգրտումները, այնուհետև հրավիրված ճաշի ընթացքում համագումարին մասնակցելու գնացած պատգամավորները ծանոթացել են, մտքեր փոխանակել:

Արա Աբրահամյանի խոսքերով, համագումարի գլխավոր հյուրերը Ռուսաստանի Դաշնության եւ Հայաստանի Հանրապետության նախագահներն էին, որոնք ներկայությամբ համագումարն, ըստ էության, ստացել է հատուկ կարգավիճակ: Համահայկական կառույց ստեղծելուն ուղղված համագումարը Արա Աբրահամյանի խոսքերով, պատմական պահ էր, որին ներկա էին 1000-ից ավելի մարդիկ:

ՀՀԿ նախագահն անդրադարձավ համագումարում ՀՀ եւ ՌԴ նախագահների ելույթներին, ընդգծելով հատկապես Պուտինի մեջբերումը Պետրոս Առաջինի հրամանագրից: Ասվածը Ռուսաստանում մեծ արձագանք է գտել, տարբեր գնահատականների արժանացել:

Համագումարի առաջին օրը մասնակիցները լսել են երկու նախագահների ելույթները, մի շարք ուղերձներ: Նախագահների ներկայությունն, ըստ Արա Աբրահամյանի, հատուկ պատասխանատվություն էր ոչ միայն համագումարը նախապատրաստողների, այլև ներկաների համար: «Պատմական առիթ է մեզ տրված, պետք է կարողանանք օգտագործել: Մենք ունենք բոլոր

պայմանները, որպեսզի լինենք կազմակերպված, ունենք հզոր սփյուռք: Մեզանից նրանք, ովքեր հասել են ինչևոր բանի եւ ունեն հաջողություններ, պետք է հնարավորություններն օգտագործեն հայ սփյուռքը, Հայաստանը հզորացնելու համար», ասաց Արա Աբրահամյանը:

«Սփյուռքն իր հերթին, հնարավորության դեպքում պետք է ստեղծի այնպիսի պայմաններ, որ հայը ներկա լինի թե՛ գիտության, թե՛ մշակույթի եւ թե՛ այլ ոլորտներում»: Պրն Աբրահամյանն ավելացրեց, որ համագումարի առաջին օրը ելույթ է ունեցել նաև ԼԴՀ նախագահ Արկադի Դուկասյանը: Ի թիվս այլ ելույթների, համագումարում խոսել է նաև Պետրոսյանի պատգամավոր Վլադիմիր Ժիրինովսկին: Ներկաների բնութագրմանը, ելույթը կրակոտ էր, բայց ինչպես Ժիրինովսկու դեպքում լինում է, ոչ բոլորին դուրեկան:

Կենտրոնակ թեմայից անցնելով լրջության, Արա Աբրահամյանը նշեց. «Եթե բոլորս չմիանանք, չաշխատենք, ոչինչ չի ստացվի: Մենք պետք է իմանանք որն է ազգի շահը, որն է մեր գաղափարախոսության հիմքը: Եթե մենք սխալներ ենք թույլ տալիս, դրանք պետք է ուղղել ժամանակին»:

Համագումարի հաջորդ օրը քննարկվել է հաստատվել է կանոնադրությունը, ընտրվել է Մեծ խորհուրդը բաղկացած 100 մարդուց: Ընտրվել են կազմակերպության նախագահ, վերստուգիչ և վերահսկիչ հանձնաժողովի անդամներ:

Արա Աբրահամյանը շնորհակալություն հայտնեց բոլոր մասնակիցներին, քննադատողներին, մշելով, որ համագումարից հետո պետք է աշխատել իրականացնել արդեն ընդունված ծրագրերը: Պրն Աբրահամյանը կոչ արեց եւ Հայաստանի իշխանություններին, եւ հայ համայնքներին, եւ մտավորականությանը իրար օգնելու, միասին համահայկական կառույց կայացնելու հարցում:

Վկարտին Արա Աբրահամյանը պատասխանեց լրագրողների հարցերին: Ռուսական լրատվամիջոցներից մեկի տարածած այն տեղեկությունը, թե հայերի համագումարում հայերեն ոչինչ չի հնչել, ըստ Արա Աբրահամյանի, սխալ է, թեկուզ այն պատճառով, որ անգամ ՌԴ նախագահը հայերեն բարեկեց համագումարի մասնակիցներին: Էլ չասած, որ համագումարը վարվել է ամբողջովին հայերենով, հայերեն է հնչել ելույթների մեծ մասը:

Իսկ թե ինչու էր համագումարը կազմակերպվել Մոսկվայում, Ա. Աբրահամյանը նշեց, որ նախ համագումարի կազմկոմիտեի անդամների մեծ մասը Ռուսաստանից էր: Եվ հետո, հենց Ռուսաստանում ստեղծվեցին համապատասխան պայմաններ նման համագումար անցկացնելու համար, մեծ աշխատանք այդ հարցում կատարեց ՌԴ կառավարությունը: Ի վերջո, Ռուսաստանում է ձևավորվել հայկական ամենամեծ համայնքը:

Շարունակելով պատասխանը, ՀՀԿ նախագահը նշեց. «Մենք Հայաստանում անցկացրել ենք կազմկոմիտեի երկու նիստ, բայց դրա մասին չեն հիշում: Դրա համար էլ մասշտաբայնությունը շեշտելու համար համագումարն անցկացվեց Մոսկվայում»:

Քաղաքագետ Անդրանիկ Միրանյանն էլ այս կապակցությամբ ավելացրեց, որ Հայաստանում անցկացվելու դեպքում համաշխարհային լրատվամիջոցներն ուշադրություն չէին դարձնի: Իհարկե, ըստ քաղաքագետի, սա ի նպաստ մեզ չի խոսում, բայց սա է իրականությունը:

Թե ինչու է Արա Աբրահամյանը սերտ հարաբերությունների մեջ ՌԴ նախագահի հետ, պրն Աբրահամյանը բացատրեց, որ իր հարաբերությունները լավ են այն երկրի նախագահի հետ, որտեղ ինքն ապրում է եւ որի քաղաքացին է, ընդ որում դա ոչ միայն իր, այլև ողջ հայ համայնքի հարաբերությունն է նախագահի հետ: Պետք է մշել, որ ՌԴՄՆ ամենաառաջավոր ՀԿ-ներից է:

Արա Աբրահամյանը համագումարի ընթացքում կարծ գրույց է ունեցել ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի հետ, դիմավորել եւ ճանապարհել է Հայաստանի նախագահին: Արդեն վաղը Արա Աբրահամյանը կրկին կհանդիպի Ռ. Քոչարյանին:

Եզրափակելով խոսքը, Արա Աբրահամյանն անդրադարձավ Հայաստան ժամանելու իր նպատակին՝ մասնակցել «Ռուսաստանի հայերի միության օրեր» ծրագրին, որին մենք կանդորադառնանք հետո:

• ԻՐԱՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՎԻԱՍՏԵՍՈՒՄ ԵՆ ԱՐԱՔՍ ԳԵՏԻ ԿՐԱ ԿԱՌՈՒՑԵԼ ԵՐԿՈՒ ՆՈՐ ՀԻՊՐՈՒԼԵԿԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆ, 14 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: ՀՀ Էներգետիկայի նախարար Արմեն Մովսիսյանի վերջերս Իրան կատարած այցի ժամանակ ամփոփվել են Արաքս գետի վրա հայկական տարածքում Մեդրու տարածաշրջանում, ՀԷԿԻ շինարարության տեխնիկատնտեսական հիմնավորման արդյունքները: Ինչպես հայտնեցին ՀՀ Էներգետիկայի նախարարության մամուլի ծառայությունից, Ա. Մովսիսյանը եւ Իրանի Էներգետիկայի նախարար Հաբիբուլահ Բիթարաֆը քննարկել են նաեւ Իրանի տարածքում նույնպես Նոր հիդրոէլեկտրակայանի կառուցման հարցը: Նախատեսվում է, որ այդ կայաններից յուրաքանչյուրը կունենա 80 մզվ հզորություն տարեկան 600 մլն կվտ ժամ էլեկտրաէներգիա արտադրողականությամբ: Նախարարների հանդիպմանը քննարկվել է ՀԷԿԵԿԻ կառուցման այն տարբերակը, ըստ որի հայկական կողմի կայանը կկառուցվի Իրանական միջոցներով, իսկ Հայաստանը հետագայում այդ ծախսերը Իրանին կփոխհատուցի կայանի արտադրած էլեկտրաէներգիայով: Քննարկվել է նաեւ Իրան-Հայաստան գազատարի կառուցման հարցը: Հստակեցվել է, որ գազամուղի հայկական հատվածը կառուցելու է Հայաստանը, իսկ Իրանականը՝ Իրանը:

ՋԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ ՄՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(7) ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵՑ ՈՒ ԻՐԱԳՈՐԾՎԵՑ ՋԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ ՄՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1922 թվականի Հունիսի 21-ին, Ռիբաթ օրը, Ջեմալ փաշայի համար ճակատագրական այդ օրը, մուսուլմանական այդ կիրակին, նա իր համհարզ Սուրսիա բեյի եւ անձնական քարտուղար Նուսրեթ բեյի ուղեկցությամբ բարձրանում է Թիֆլիս քաղաքի հրաշալիքներից մեկը՝ ֆունիկուլիորը, որա գովաստուն ռեստորանում քեֆ անելու, այնտեղից գնալվելու դեպի քաղաք ու հեռուները բացվող ակնահաճո տեսարաններով...

Ջեմալին հետևելու պաշտոն ունեցող հետախույզներից երկուսը նրա հետևից անմիջապես բարձրանում են ֆունիկուլիոր, իսկ երրորդը լուրը Արտաշեսին ու Պետրոսին հաղորդելուց հետո, նույնպես բարձրանում է վերել, միանում ընկերներին: Նրանք երեքով կարողանում են Ջեմալի ֆունիկուլիորում եղած ամբողջ ժամանակ, առանց աչքի ընկնելու եւ որեւէ կասկած առաջացնելու, փաշայի սեղանը իրենց տեսադաշտի տակ պահել եւ պարբերաբար անցած դարձածի մասին լուր տանել ներքեւ, վրիժառուներին:

Կեսօրից անց, երբ բանբերը լուր է բերում, թե փաշան բավական խնել է եւ շողակրատում է ագատ, վրիժառուները որոշում են անհապաղ բարձրանալ վերել ու այնտեղ հենց քեֆի սեղանի շուրջը շանսատակ անել Ջեմալին: Սակայն երբ գնում են գեներալը վերցնելու, այնտեղ, մի քանի ընկերների հետ ավելի հանգամանորեն քննում են այդ որոշումը եւ գտնում են ավելի վտանգավատր... Որովհետեւ սպանությունից հետո ֆունիկուլիորից հեռանալը, թագնվելը բավական երկար ժամանակ էր պահանջելու, որի ընթացքում իշխանությունները հնարավորություն ու ժամանակ կունենային չեկիստներով, միլիցիոներներով, նույնիսկ զորքով օղակելու ֆունիկուլիորն ու բռնելու այնտեղից դուրս եկող բոլոր վերքեր, հետևաբար այնտեղ եղած բոլոր մարդկանց ստուգելու, խուզարկելու եւ ձերբակալելու, ինչ որ շատ հեռուն կարող էր տանել եւ լի էր անակնկալներով...

Նրանք տեղոր մի այնպիսի տեղ պետք է կատարեին, որտեղից անմիջապես, մի քանի րոպեում հեռանալու, հետքերը կորցնելու առավել հնարավորություն լինել...

Վրիժառուները լավ հասկանում էին, որ իրենց հաջողությունը կախված է գլխավորապես գործողության կատարման արագությունից: Ըստ նրանց ենթադրության, սպանությունը տեսելու էր մեկ րոպեից ոչ ավելի... Երկու-

երեք րոպե էլ պետք կլիներ, որպեսզի իրենց հեռացած լինեին դեպի վայրից ու մտած մի կողմնակի փողոց, որով խուսափած կլինեին ականատեսներից... Հետևաբար ճգնաժամային դրությունը տեսելու էր ընդամենը ոչ ավել հինգ րոպեից, որի ընթացքում դժվար թե իշխանությունները կարողանային հասնել տեռորի վայրը, հետապնդում կազմակերպել... Այդ ամառային խաղաղ երեկոյան կրակի մահաբույր վայրը շտապող սիրահարներ կգտնվեն...

Միմիայն պատահական, անակնկալ արեւ խոչընդոտ կարող էր այդ հաշիվը խախտել...

Հրաժարվելով ֆունիկուլիորում գործելու մտադրությունից, վրիժառուները կառքով բարձրանում են ֆունիկուլիորի ներքեւի կայանը, բաց թողնում կառքը, որի հեռանալուց հատո միայն իրենք ոտքով, դանդաղ ցած են իջնում, հետագոտելով այն տեղանքը, որտեղից հավանաբար պիտի անցնեի Ջեմալը քաղաք իջնելուց հետո... Ապա երկու անգամ Պետրոս Մեծի փողոցից տարբեր ուղիներով անցնում են դեպի Վոզնեսենսկայա փողոց, Պալաչյանի փուռը, ճշտելով գործողությունից հետո հեռանալու եւ այնտեղ գնալու ուղին...

«Այդ հետախուզություններից հետո վերջնականապես որոշում են փաշայի վրա հարձակվել... ԶեֆաՅԻ ՇԵՆՔԻ եւ Սուլուկի միջեւ ընկած հատվածում: Քանի որ խնջույքից հետո Ջեմալը ամենայն հավանակությամբ ամենակարճ ուղիով անցնելու էր դեպի Դանովկայա փողոց, թուրքական հյուպատոսարան:

Մեծն Պետրոսի փողոցը Թիֆլիսի խաղաղ փողոցներից էր, մարդաշատ չէր լինում, խանութներ չկային այնտեղ, հասարակական հաստատություններ չկային, միլիցիայի այստ չկար փողոցի այդ հատվածում: Չախ կողմում, Պալաչյանի եւ այգու հետեւի մասում բնակելի տներ չկային, այնպես որ շատ ձեռնտու էր գործողության համար... Իսկ ամենապատվաբորը այն էր, որ այդտեղից հեռանալու եւ հետքերը կորցնելու համար շատ քիչ ժամանակ էր հարկավոր լինելու: Երկու-երեք րոպեում կարելի էր հասնել Երեւանյան հրապարակ ու խառնվել այդ պահերին այնտեղ մշտապես զբոսնող հոծ հասարակության հետ կամ ծուռունուռ սակավ լուսավորված նրբանցքներով ու նեղ փողոցներով էլի երկու-երեք րոպեում հասնել Վոզնեսենսկի փողոց, Պալաչյանի փուռը, որտեղ մշանակված էր իրենց առաջին ապաստարանը:

Այդ ըստ ամենայնի ձեռնտու ծրագրի միակ բացասական կողմը այն էր, որ գործողության վայրը գտնվելու էր Ջեմալի շենքին շատ մոտիկ...

Այնուհանդերձ Արտաշեսն ու Պետրոսը հավանում են այդ ծրագրին եւ ամենայն պաղարյունությամբ ձեռնամուխ են լինում հենց այդ որոշումի իրագործման, ասելով. «Այդտեղ մեզ ոչինչ չի խանգարի սպանելու Ջեմալին, իսկ նրան սպանելուց հետո՝ թեկուզ ջրիեղել...»:

Կապավորներին էլի մի քանի արդեն երկրորդական մշանակություն ունեցող կարգադրություններ տալուց հետո, վրիժառուները գնում են Հացի մեղանի փուռը գինվելու: Ամբողջ խումբը կազմ ու պատրաստ իրենց դիրքերում են, դերերը հստակորեն գիտեն, փոքրիկ Այվազին պատվիրում են գնալ Պալաչյանի փուռը իր հետ վերցնելով հաց տեղափոխելու կողմը եւ այնտեղ սպասել իրենց, զուցե հարկավոր լինեի այնտեղ հասնելու պես գեներալը տեղափոխել ուրիշ տեղ...

Կապավորներից մեկը այդ պահին գալիս հայտնում է, որ Ջեմալը իր ընկերներին ասել է.

- Սպասեք քաղաքի լույսերը վառվեն. գիշերային տեսարանը շատ գեղեցիկ է լինելու...

ԵՎ նորից կոնյակ են պատվիրել:

Պարզ է ուրեմն մինչեւ ուշ երեկո Ջեմալը իր ընկերներով մնալու է ֆունիկուլիորում... Ավելի լավ... Սթան մեջ ավելի հեշտանում է եւ՝ գործը, եւ... խուսափում...

Արդեն զինված գործելու պատրաստ, Արտաշեսն ու Պետրոսը գալիս են Պուշկինի, Գեորգյանների տանը մի փոքր ճաշում են ու որոշում այդտեղ էլ սպասել ֆունիկուլիորի բանբերներին... Որքան հնարավոր էր նրանք պետք է գինվելուց հետո քիչ ժամանակ դուրսը գտնվեին, որովհետեւ կարող էր որեւէ անակնկալ խոչընդոտ հանդիպեր ու ամբողջ գործը փչացներ...

Սպասումի դաժանագույն ու անվերջանալի պահեր են անցնում այդտեղ: Վերջապես կառքը կանգ է առնում փողոցում ու կապավորներից երկուսը երեւում են

բակում... Արտաշեսը իր գլխարկը փոխում է, ծածկում ուրիշն ու դուրս են գալիս տանից...

Երբ ֆունկիկոլիորի հետախույզներին պարզ է լինում, որ քեֆը վերջանում է եւ անձնական քարտուղարը պատրաստվում է վճարում կատարել, նրանցից երկուսը անմիջապես իջնում են բաղաբ, լուրը հաղորդելու. իսկ երրորդը հետախույզը մնում է շարունակելու հսկողությունը:

Ներքեւում, ֆունկիկոլիորի կայանում սպասելիս են եղել երկու կառք. հետախույզները մեծ իմաստություն են ցուցաբերում նախորոք վարձելով երկու կառքերն էլ. այլապես շատ հավանական էր, որ փաշան իջնելիս կառք նստեր ու սրընթաց հեռանալով փրկվեր այդ օրը...

Փաշայի իջնելու լուրն իմանալով պատմում էր Արտաշեսը - կարծես մի ծանրագույն բեռ ընկավ մեր վրայից... Ազատ շունչ քաշեցինք... Թեւեւ արդեն ուշ երեկո էր, մթնշաղ, բայց թվաց թե աշխարհը լուս-լուսացավ, պայծառացավ մեկն...
Պուշկինյան պուրակում, ըստ պայմանավորվածության սպասում էին մյուս ընկերները: Որոշվել էր, որ Պետրոսը ու Արտաշեսը այդտեղից գնալու են առանձին-առանձին, զուգահեռ մայթերով, բավական հեռավորության վրա, բայց առանց իրար աչքից կորցնելու: Նրանց հետեւից մի քանի քայլի վրա գնալու էին անզեն կապավորները, իբրեւ չբոսողներ... Նրանք պիտի հատելեին մինչեւ այնտեղ, որտեղ Արտաշեսն ու Պետրոսը կմիանան իրար...

Նախորոք նույնպես որոշվել էր, որ եթե Արտաշեսի կամ Պետրոսի հետ մի որեւէ ծախսող դեպք պատահի, որի հետեւանքով մեկը չկարողանա շարունակել ճամբան, հետ մնա կամ բոլորովին շարքից դուրս գա, այդ պարագային մյուսը չպիտի զբաղվի հետ մնացողի վիճակով, այլ անմահանք պիտի դիմի նպատակի իրագործման եւ մեն-մենակ գրոհի փաշայի վրա, «անդալի» նրան... Իսկ հետ մնացող ընկերոջ վիճակով պիտի զբաղվեն կապավորները, որոնք իրագրեմի փոխարեն գրպաններում ունեին բավականաչափ չեքվոնեց... Նրանք հանդես պիտի գային իբրեւ պատահական անցորդներ...

Առանց պատահարի նրանք, Արտաշեսը եւ Պետրոսը անցնում են Դկորցովայա նեղլիկ փողոցը, որտեղ խանդիխուռն զբոսնող հազարավոր ամբոխը գալիորեն խանգարում ց իրենց արագ առաջանալուն... Այդպես է լինում նաեւ Գոլովինսկու սկզբում, Պալատի առաջ: Բայց երեւոյվյալ վերելքում (Պալատի եւ Ռուսական Ալեքսանդր-Նեւսկու տաճարի միջեւ) մարդիկ շատ քիչ են լինում ու նրանք արագությամբ բարձրանում են դեպի վեր: Ստեպանտայ նրանք հանդիպում են վերելից իջնող զինված մարդկանց, որոնք անկասկած՝ չեկիստներ են եղել... Քիչ անց երեւում են Չեկայի շենքերը, որոնց մուտքի առաջ հսկում են զինված ժամապահները...

Մի քանի քայլեր առաջանալով նրանք տեսնում են, որ վերելից, ձախ մայթով իջնում են երեք մարդ, որոնք հասնելով Պետրոս Մեծի փողոցի անկյունը, մտնում են այդ փողոցը... Նրանց ետեւից իջնում է չորրորդը, որը ֆունկիկոլիորում մնացած երրորդ կապավորն է, ինքը՝ ծերունակարդ հայրենասեր Սերբո Դուրյարյանը... Այդտեղ էլ Արտաշեսն ու Պետրոսը միանում են իրար եւ գլխով նշան անում իրենց հետեւից ընթացող կապավորներին, որ ետ գնան... Ս. Դուրյարյանը գլխով ցույց տալով դեպի երեք հոգին, այսինքն ՆՐԱՆՔ ԵՆ, անձկանոք ասում Արտաշեսին ու Պետրոսին.

- Օրինակի ձեզ բերող մայրն, որդի-ք, աստվա ուխտնիդ ընդունելի էմա... - եւ արագ իջնում է ներքեւ...

Պետրոս Մեծի փողոցը այդ պահին, ժամի տասի մոտեքը, համարյա թափուր է լինում... Միայն հեռվում, երեւում են հետ ու կենտ մարդիկ (որոնք, իհարկե չէին կարող խանգարիչ լինել իրենց գործին)... Փողոցի աջ մայթով (դեպի Սոլովակ գնալիս) գնում էին Ջեմալն ու իր երկու ընկերները: Նրանք քայլում էին սովորական, հանգիստ քայլերով, գրուցելով... Արտաշեսն ու Պետրոսը նրանց հետեւում էին գնալով նրանց զուգահեռ ձախ մայթով (այսինքն Պալատի եւ Պարտեզի պարիսպ-ցամակապատի կողմից): Նրանք քայլերը արագացնում են, բայց էլի մեծ զգուշությամբ անձայն, անշշուկ եւ աննկատելի հավասարվում են Ջեմալի հետ...

Ջեմալ փաշան քայլում է մեկի հետ թեւանցուկ: Նրանցից մեկի ձեռքին ձեռնափայտ կա, իսկ երրորդը մի քիչ առաջից է գնում... Լսելի է նրանց ոչ հստակ, կցկտուր խոսակցությունը: Արտաշեսն ու Պետրոսը մի վայրկյան

կանգ են առնում, ետ նայում Չեկայի կողմը ու ոչինչ կանկածելի, վտանգավոր չեն նկատում. Չեկայի առաջ ժեմապահները առաջվա նման հանգիստ հսկում են իրենց պոստերի վրա: Ուրեմն թիկունքից որեւէ վտանգ, արգելք առաջմ դեռ չկա... Իսկ Առջեւում, Սոլովակի կողմը, մայթերի վրա թեւ երեւում են մի քանի տղամարդ եւ մի կին, բայց նրանք դեռ բավականին հեռու են եւ սովորական անցորդները են երեւում, հետեւաբար չեն կարող խոչընդոտ հանդիսանալ իրենց...

Պետրոսը լռելեայն, խորհրդավոր սեղմում է Արտաշեսի ափը: Արտաշեսը, փաղաքշանքով, մի թեւով գրկում է Պետրոսի թիկունքը... Ո՛ր շնչերը պահած, ամենայն լուրջամբ եւ զգուշությամբ նրանք ոտք են դնում խճաքարով հատակված նեղ փողոցի վրա, կտրում անցնում այն մի ակնթարթում...

(Շար. 7)

Աշխարհում ինչի՞ համար են սիրում հայերին

Ս. ԻՍԿԱՆՆԱԴՐՅԱՆ, Գ. ՎԱՀԱՆՅԱՆ

86. Այս բարեբերձ, սակայն խաղաղ լանջերում, այս անանցանելի գագաթներում, այս անդորր երկարուկ գոյացումներում, բնության բուսականության մեջ շեշտված են նախասկզբնական մեկնարկի ակնարկությունները, թվում է, որ այս հանգամանքը ներգործում է զգացողության, ենթագիտակցության վրա, ծնուն է գաղափարներ, երազներ, պատվափրություններ, որոնք դարավոր պատմական կյանքի իրարահաջորդ հերթումների մեջ, բնական է, որ դառնային մշտական վերքեր, մատնված երազներ, որոնք, այսուհանդերձ, չեն դադարում գոյություն ունենալուց: Եվ այս ամենը մտնում է հայի ազգային գույնի մեջ որպես գլխավոր գաղափար:

87. Հայ արվեստագետները, ուշիմ մի ցեղի աշխատողներ եւ նրա արտահայտիչներ, չեն կարող շփան մեջ չլինել ժամանակակից հոսանքների հետ, որոնք փչում են իրենց հայրենիքից շատ հեռու: Այդ ուղղությամբ էլ նրանք պարզ գալից ունեն: Այս բանը հեշտ է տեսնել մտնելով որեւէ աշխատանոց, ժամանակակից թանգարան, կարդալով մի լավ բանաստեղծություն, մի լավ արձակ գրվածք: Շատ անգամ, երբ դիտողը քիչ թե շատ նախապատրաստված է, դժվար չի լինում ինչ-որ ազդեցությունները շոշափելը, սկզբնօրինակները նշելը: Այս բոլորով հանդերձ՝ հայ ստեղծագործները մնում են իրենց ազգային կլիմայի մեջ, պահպանում նրա նկարագիրը եւ, ընդհանրապես գնահատելով, հիացմունքի են արժանի իրենց ազգային կայունությամբ եւ հավատով: Հնամենի Հայաստանը ապրում է լիարյուն կյանքով, այսօրվա արվեստով, միաժամանակ բավական առաջընթաց արելով ժամանակակից հետազոտությունների բնագավառում:

88. Նաիրի կնշանակի Գետակների երկիր: Այս անվանումը եւս հանդիպում է հնագույն պատմության մեջ շատ ուրիշ անվանումների հետ, ինչպես եւ Հայաստանը, որը այսօր էլ իրենք հայերը, օգտագործում են, եւ Շնանակում է Հայկի երկիր: Բնակիչները կոչվում են Թորգոմյաններ, Թորգոմի անունից, որը Նոյի որդի Հաբեթի չորրորդ սերունդն էր: Խեթերը երկիրը անվանել են Հայասա, վրացիները՝ Սոմխեթի, քաղցաղները՝ Արմանի եւ Նաիրի, բայց եւ Ուրաշտու «բարելոնյան բարբառում Ուրարտու», պարսիկները՝ Արմինա, հույները՝ Արմենիա, ուրիշներն էլ այլ կերպ: Հաստատ չէ, որ այս բոլոր անվանումները արտահայտում են Ուայ երկիրը եւ նույն ժողովրդին: Տարբերվում են անվանումները, տարբերվում են նաեւ դրանց օգտագործման ժամանակները...

Հաստատն այն է, որ խոսքը վերաբերում է այդ տարածքի հնագույն ժողովուրդներից մեկին: Իր բազմադարյա պատմության մեջ նա կարողացավ վերապրել եւ ստեղծել իր սեփական քաղաքակրթությունը, բերել իր սեփական գույնը ցեղերի եւ ազգերի պատմության մեջ:

ՄԻՑՈՍ ԱՆԵՔԱՆՆՈՐՊՈՒՆՈՍ
Ժամանակակից հույն գրող, գրականագետ
/Ս. Ալեքսանդրոպոլոս, Հայերը, Երեւան, 1984/

89. Այսօր հայությանը թիվը հասնում է 5-6 միլիոնի, որոնք սփռված են գրեթե ամբողջ աշխարհով մեկ: Նրանք մշտապես դրսևորել են մտային բարձր կարողությունը և հաջողակ են բիզնեսում ու մասնագիտական բնագավառում: Նրանք հայտնի են որպես գիտնականներ, մաթեմատիկոսներ, բժիշկներ, ատամնաբույժներ: Նրանք ճանաչված են արվեստի, գրականության մեջ: Բազմաթիվ հայեր կան դիրիժորների, երգիչների, շարժապատկերի ռեժիսորների, արձանագործների և գրքեր նկարագարողների մեջ: Չնայած իրենց ողբերգական պատմությանը նրանք աչքի են ընկնում երգիծանքով... Հայերը գերազանց խոհարարներ են, և նրանց հյուրասիրությունը հայտնի է: Նրանք անկեղծ բարեկամներ են և տվել են բազմաթիվ զինվորական ղեկավարներ:

ՌԵՅՎԻԴ ՄԱՅՄԱՆ 1924-1991 / Անգլիացի կովկասագետ, հայագետ

/Դ. Մ. Լամբ, Բ. Ի. Ուոքեր, Հայերը, Երևան, 1992, էջ 14/

90. Հայաստանը նաև իմ սերն է, իսկ նրա հազար տարեկան որդին համաճարեղ Գրիգոր Նարեկացին, դարձավ իմ կուռքը, երբ կարդացի "Մատյան ողբերգության" պոեմը և ամենայն սիրով "Եվ դարից եկար ձգվում է օրը" վեպին իբրև բնաբան ընտրեցի "Չոր գիրդ ընդ մարմնոյս և բանդ ընդ հոգւոյս" բառերը... Ինչպե՞ս կարելի է կարդալ Նարեկացի և չսիրահարվել Հայաստան երկրին, ունենալ թուրմանյան, Իսահակյան, Չարենց, Սեւակ և ուրիշ մեծեր ու չապրել հավերժոր մշակույթի ժառանգորդի օրինական հպարտությունը:

Վարդան Այգեկցի

16. Կտակ գանձի մասին

Մի իմաստուն է և աղքատ մարդ ուներ ծոյլ որդիներ: Մահվան ժամին նա կանչեց որդիներին և ասաց.

-Ո՛վ զավակներ, իմ նախնիները շատ գանձ են թաղել մեր այգում, և ես ձեզ ցույց չեմ տա նրա տեղը: Այդ գանձը կը գտնի նա, ով շատ աշխատի և խոր փորի:

Ե և հոր մահից հետո որդիներն սկսեցին աշխատել մեծ եռանդով և խորագոյն էին վարում, որովհետև յուրաքանչյուր աշխատում էր, որ ինքը գտնի գանձը:

Ե և այգին սկսեց աճել և գորանալ և առատ բերք տվեց և նրան հարստացրեց գանձերով:

17. Ուղտը, գայլը և աղվեսը

Ուղտը, գայլը և աղվեսը եղբայր եղան և ճանապարհ ընկան և ճանապարհին գտան մի բլիթ հաց և միմյանց ասացին, թե ով ավագ է, թող նա ուտի: Ե և սկսեցին ասել իրենց տարիքը: Աղվեսը ասաց.

-Ես այն աղվեսն եմ, որի անունը Ադամը դրեց:

Գայլն ասաց.

-Ես այն գայլն եմ, որին Նոյը տապանն առավ:

Ե և ուղտը, տեսնելով, որ նրանք իրենց ավագ դուրս եկան և հացը պիտի առնեն, հացը բերանն առավ բարձրացնելով ասաց.

-Մի թե ես երեկվա տղան եմ, որ այսչափ մեծացրել եմ իմ սրունքները:

Ե և սկսեց հացն ուտել: Իսկ աղվեսը և գայլը, ցատկելով նրա շուրջը, ոչինչ չկարողացան անել և փախան:

18. Եզը և ձին

Եզը և ձին խոսեցին միմյանց հետ: Եզն ասաց.

-Դու ո՞վ ես կամ ինչի՞ պետք ես:

Չին ասաց.

-Ես ձի եմ, և ինձ թագավորները և իշխանները և պարոնները գարդարում են ոսկով և արծաթով և բազմում են ինձ վրա:

Եզն ասաց.

Ամբողջ աշխարհի բարեկեցությունն են ես, որովհետև ես եմ վաստակում և չարչարվում եմ հոգում, և ասպ դու և քո թագավորն ուտում էք: Ե և բոլոր մարդիկ ուտում են իմ վաստակը, և եթե չվաստակեմ, դու և քո թագավորն իսկույն կը մեռնեք: Ե և դու երախտամոռ մի լինիր:

19. Հիմարը և ձմերուկը

Մի հիմար է միամիտ մարդ ուներ մի դահեկան և, առնելով դահեկանը, գնաց բաղաբ մի էջ գնելու և շրջեց բաղաբում և շուկայում և չգտավ մի դահեկանի էջ, ասպ կրկին եկավ շուկա և տեսավ մի մեծ ձմերուկ և իրացմամբ հարցրեց.

-Այս ի՞նչ է:

Ե և վաճառականներն իմացան, որ նա հիմար է և ասացին, թե հնդու է՞ի ձու է և կր հանի հնդու մեծ էջ: Ե և ուրախանալով մարդը, տվեց դահեկանը և առավ հնդու էջի ձուն: Ե և վաճառականները նրան պատվիրեցին, թե.

-Չեղբիդ զգույշ տար, թե չէ կը կոտորվի, և էլը միջից կը փախչի:

Ե և ձմերուկը ձեռքին մարդն սկսեց գնալ գառիվայր ճանապարհով, և նրա ոտքը սայթաքեց, ձմերուկը ձեռքից դուրս պոճավ և գլորվեց խիտ անտառի մեջ, և անտառից մի նապաստակ վազեց և սկսեց փախչել, իսկ մարդը կարծեց, թե ձուն կոտվել է, և ահա էլը ելել և փախչում է: Ե և հետևից վազելով, կանչում էր նապաստակին և ձայն էր տալիս.

Ա՛յ հնդու էջ... վա՛յ ինձ, մի փախչիր. քուռի՛, քուռի՛, խնայիր ինձ և վերադարձիր:

20. Աղքատը և Ավետարանը

Մի աղքատ մի գյուղ եկավ և մտավ գյուղի եկեղեցին, որ խաղիսով էր և անձրեակեղ: Ե և այն աղքատը անձրեակաբաց էր պատառոտուն զգեստ և դողում էր և հոգնել էր ճանապարհից:

Ե և ներս մտավ քահանան, սկսեց ժամ ասել: Առավ Ավետարանը և կարդաց այն էջը, ուր գրված էր. «Օտարական էի ընդունեցիք ինձ, մերկ էի հագցրիք ինձ, քաղցած էի կերակրեցիք ինձ, ծարավ էի հագեցրիք ինձ»:

Այն աղքատը լսեց և ուրախացավ. Այս ինձ համար է ասված, և ահա շուտով կը կատարեն իմ կամքը:

Իսկ քահանան ժամն արձակեց և գնաց տուն և աղքատին թողեց եկեղեցու մեջ և հոգ չտարավ նրա մասին:

Ե և աղքատն ասաց. Այն գիրն, որ կարդաց, սուտ էր:

Ե և առավ Ավետարանը, վրան քար դրեց և սուգեց ջրի մեջ: Ե և քահանան, եկեղեցի գալով, Ավետարանը չգտավ և ազքատին ասաց.

-Ո՛ւր է Ավետարանը:

Ե և աղքատն ասաց քահանային.

-Ի՞նչ ես անում սուտ Ավետարանը, և ես տարա ջուրը զգեցի:

Ե և քահանան բարկանալով սկսեց ծեծել աղքատին, և աղքատն ասաց.

Ինչո՞ւ ես ծեծում ինձ, անիրավ. եթե հավատում ես, թե Ավետարանն Աստծու ճշմարիտ խոսքն է, ապա ինչո՞ւ չես կատարում նրա կամքը: Որովհետև ես օտարական եմ, և ինձ չեք ընդունում, մերկ եմ, և ինձ չեք հագցնում, քաղցած եմ, և չեք կերակրում ինձ, ծարավ եմ, ջուր չեք տալիս: Մի՞թե Աստված այդ բաների պակասությունն ուներ և այդ ամենն իր համար ասաց:

ՂԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՃՆԵՐ

-Երկաթը տաք-տաք կծեծեն:

-Երկնից մի քար է կախված, ով ինքն իրեն չզովի, գլխին կընկնի:

-Երկինքն ի մէջ ուղարկեց, որ հողը չընդունեց:

-Երկու նապաստակի ետեւից ընկնողը ոչ մեկին չի բռնի:

-Երկու շուն կռվեցին, ճամփորդի բանը հաջողեց:

-Երուսաղեմ հասանք, քոռ վարդապետի ձեռքը համբուրեցինք:

-Չարկեց խորոտին, կպավ կոլոտին:

-Չոռն անգորիկ կերել է:

-Էն վաղ էր, որ էլը կաղ էր:

-Էլը դատի, ձին ուտի:

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԱՌԱՃՆԵՐ

-Չու գողացողը ուղտ էլ կգողանա:

-Չուկը երբ էլ ջրից համես քաղոք է:

-Ճտերը աշնանը կհամբեն:

-Մահը հարուստ ու աղքատ չի հարցնում:

-Մարդու բախտը որ չբերի, ձին գոմի մեջ էլ կդառնա:

-Մեծ պատառը կոկորդ կպատռի:

-Մեկ պատվով մեռածը հարյուր անպատիվ ապրողներից լավ է:

-Սգլիթի դուռը ասեմք թե բաց է. բայց շո՞ւնն ինչպես չի ամաչում, որ ներս է մտնում:

-Մինչև երեխան լաց չլինի, մայրը կուրծք չի տա:

Արփի Վանյան

ԹԵԿՈՒԶ...

(Շարունակություն 2 եւ վերջ)

Հարավային ռազմաճակատներից մեկում թե՛ մարտեր էին ընթանում: Առջեւում տանկիստներն էին, որ անցնելով թշնամու դիրքերի, խրամատների վրայով կենաց ու մահու պայթյալ էին տանում: Թշնամին զինված էր մինչեւ պատմները, թշնամու զորքը սեւ ոգեւորության մեջ էր: Արամը ամենաառաջինների շարքերում էր, Արամի տանկը արդեն շատ կրակակետեր էր ոչնչացրել, շատ առաջնադասումների մարդ դարձել:

... Իրիկնամուտին մարտը դադարեց՝ լուսաբացին կրկին վերսկսվելու համար:

Արամը հանեց զինվորական ծանր բուշլաթը, ձգվեց ու հոգնած մարմինը մի կերպ նետեց մահճակալին, որ հենված էր բլինդաժի հողոտ ու սառը պատին: Աչքերը փակվում էին, բայց ուղեղը չէր ուզում հանգստանալ: Ականջների մեջ մեկ ուժգին, մեկ խուլ լսվում էին հրետանու, արվ ու ակամի, հրթիռների պայթյունները... կոպերի վրա, վերջին օրերի ողջ ծանրություններով նստել էր միրիք... ինչու՞, սակայն, ուղեղը չի ուզում հանգստանալ, մի պահ հիշեց ծխախոտի մասին, հաջորդ վայրկյանին արդեն մոռացավ... աչքերի առաջեւ կուտակված մշուշը կամաց-կամաց բացվեց, հենո չգիտես որտեղից ներխուժած արեւի կուրացնող լույսի մեջ երեւաց մի պատկեր... ծանոթ, հեռավոր... ո՞վ է... վառարանում ճրթճրթացող փայտերի ջերմությունից, մարմինը տաքացավ... ծով՝ անվերջ, անսկիզբ... մեղմ քամի, ջերմ ու շոյող արեւ, ծանոթ պատկերը կրկին երեւաց, այժմ ավելի մոտիկ, այժմ ավելի ծանաչելի ու մեկնեց ձեռքը... ժպտում է... Հանկարծ թվաց, թե մեկը բարձր ասաց իր ամուսնու, ուշադրությունը լարեց, ծանոթ պատկերը կորավ մշուշի մեջ, մեկնեց ձեռքը, որ պահի... Նորից նույն ծայր կանգնեց, ծիգ գործարկելով, մի կերպ բացեց չինագանդվող կոպերը: Դիմացը կանգնած էր կապվոր ու ինչ որ բան էր ասում: Լամպի աղոտ լույսի մեջ նկատեց, որ վերջինս անհանգիստ է: Հավաքեց ողջ ուժերը, բարձրացավ տեղից.

- Ի՞նչ է պատահել:
- Քաղաքից եմ կապվել... դու պետք է գնաս...
- Ինչու՞, ի՞նչ է պատահել... ձայնի մեջ տազանապ կար:
- Կոնկրետ չգիտեմ, բայց ասացին, որ ձեր տան մեջ «Գրադ» կայանքի արձակած հրթիռն է պայթել, այսօր քաղաքը ռմբակոծում էին թուրք շները... որ չլինեն դրանք... ու արհամարհանքով թքեց ատամների արանքից:
- Տանը ո՞վ կար... ձայնը խզվել էր:
- Մայրդ... չէ, չէ... աստված մի արացե՛... նա ծանր վիրավոր է: Հոսպիտալում է: Մի քիչ դադարից հետո ավելացրեց, - Եթե գնալու ես դրսում քաղաք գնացող մեքենա կա...

Արամը ծանր քայլերով վեր կացավ տեղից, ծխախոտ վառեց... գլուխը ահավոր ցավից, կարծես թե, պայթում էր, ոտքերը մի կերպ էին հնազանդվում կանթին:

Ամբողջ ճանապարհին լուռ էին... մեքենայից դուրս էլ ամեն ինչ խաղաղ էր, միայն երբեմն այստեղ-այնտեղ առկայծող լուսածրող զնդակներն էին գրավում անսահմանությանը ուղղված զինվորների ուշադրությունը, դրանք էլ, եթե փորձես նմանեցնել լուսատիտիկների, ապա ամեն ինչ կթվա գեղեցիկ, բնական, ներդաշնակ...

Հոսպիտալի միջանցքները մութ էին, դռների հետեւից լսվում էին հառաչանքներ, տնքոցներ, զսպված հեծկլտոց: Միրտը ճնվեց, աչքերի առաջ կրկին հառնեց քիչ առաջ տեսած ահավոր տեսարանը՝ ավերված հայրական տունը. մի մասն այրված, մի մասը փլված... կրծքի տակ, սրտի շրջանում սուր ծակոց գագ, կուչ եկավ ու նայեց շուրջը, որտեղ է մայրը: Սենյակներից մեկում անցուդարձ կար: Բացեց դուռը: Ամեն ինչից երեւում էր, որ վիրահատարան է: Բժիշկը կանգնել էր պատուհանի առաջ: Մոտեցավ: Բժիշկը շրջվեց.

- Վերքերը շատ էին, բայց վիրահատությունը հաջող է ընթացել:
- Բժիշկ, հույսի մշույլ կա՞...
- Ապավինե՛ք Աստծուն... ու հառաչե՛ց:

- Աստված իմ... - հոսպիտալով մեկ լսվեց տղամարդկային լացակունած, աղերսալի մի ձայն...
Վրե՛ժ... մեն ու միայն վրե՛ժ... բզկտված մոր, ավերված հայրական օջախի, մանկության բակի, պատանեկության կտուրի, կոխկրտած սրբությունների համար...

* * *

Գիշերը սկսեց նահանջել. հակառակորդը գրոհի էր պատրաստվում, պետք է հակահարված տալ, հակազորի դիմել: Արամը գգաց, որ իր մեջ ինչ որ բան փոխվել է, որ հոգին լցված է վրեժով, ատելությամբ, որ այս մարտը նման չի լինի ոչ մի մարտի, այն կլինի անխնայ, անզիջում, համենայնդեպս, իր համար:

Լույսը բացվեց: Հակառակորդի կողմից որոտացին ծանր հրետանու, ականանետների համազարկերը: Գորշ ու ահարկու ծխի թուլաները ծածկել էին երկինքը, այստեղ- այնտեղ այրվող եղեգնուտներից լճակային տհաճ հոտ էր փչում: Հակառակորդը գրոհի դիմեց: Դեպի հայկական դիրքերը շարժվեցին մի քանի տանկ, դրանց ետեւից հետեւակը: Հայկական դիրքերի թիկունքից լավեցին հրետանու համազարկերը: Հակառակորդի տանկներից մեկը կանգ առավ թրթուռներին հասցրած դիպուկ կրակից: Տանկի անձնակազմը փորձեց փախուստի դիմել, սակայն ավտոմատի կրակահերթը կասեցրեց այն, դեռ ոչ մի քայլ չկատարած:

- Արե՛ք, տղերք, - լսվեցին խրամատներում:

Տղաները միահամուռ կրակ բացեցին: Հայերի խրամատներում էլ երեւացին առաջին վիրավորները, զոհերը: Հակառակորդի շարքերը թեկուզ նոսրանում էին, բայց վազբով, կուզեկուզ, թիկերի ու քարերի ետեւ թաքնվելով դանդաղ առաջ էին գալիս: Թաքստոցից ելան հայերի տանկերը, եւ հուժկու թրթուռների տակ փշրելով ամեն ինչ, առաջ սլացան, նրանց հետեւից նարժվեց հետեւակը: Ազերիները երերացին ու սկսեցին անհանջել: Փոխհրածությունը ուժեղ էր, երկու կողմերից էլ վիրավորներն ու զոհերը շատ: Մարտը տեսեց երկու ու կես ժամ եւ ավարտվեց հակառակորդի պարտությամբ: Արամը գոհ էր, թթի տակ հայիտյուն էր, կծու խոսքեր ասում, թթում ատամների արանքից.

- Արամ, նայի՛ր նրանց տանկին, ինչքան գիտեմ աշխատող է, միայն թրթուռներն են վնասվել, - դիմեց գունաբուրդի հրամանատարը:

Արամը գլխով դրական շարժում արեց ու մոտեցավ թշնամու տանկին: Թեթեւ շարժումով բարձրացավ, նստեց մեխանիկի տեղը, սկսեց գննել: Ոտքերի տակ թղթեր կային թափված: Բարձրացրեց լուսանկարներ էին. նայեց, մի կողմ դրեց, բայց նույն վայրկյանին էլ կրկին ձեռքը առավ դրանք, ինչ որ ծանոթ բան կար լուսանկարից նայող կնոջ այդ հայացքի մեջ: Ուշադրությունը լարեց: Այո, այո, գործը տանի: Նայեց երկրորդ լուսանկարին ու քարացավ տեղում: Խելազարի պես դուրս թռավ տանկից, նայեց շուրջը. Քիչ հեռու երեսնվայր ընկած էին երեք հոգի: Շնչահեղձվելով մոտեցավ: Մի թե սրանցից մեկը նա է: Արագ շուռ տվեց առաջինին. նա չէր, կողքինը տնքաց, Արամը մեկնեց ձեռքը, տնքացող տղամարդը երեսը շրջեց ու հանկարծ զարնանքից լայն բացեց աչքերը....

- Մուսա...
- Արամ... - կրկին ծանր տնքաց.
- Արամը կորցրել էր իրեն, չգիտեր ինչ աներ, ձեռքերը դողում էին, սիրտը հանգիստ չէր տալիս. նորից այդ ծանոթ ծակոցը կրծքի տակ.
- Մուսա, դու այստեղ ի՞նչ ես անում, Մուսա, դու ինչու՞ ես եկել: - Արամը բռնեց վիրավոր ընկերոջ օձիքը. թափահարեց ողջ ուժով:
- Օգնի՛ր ինձ, Արամ... ես չէի ուզում... բայց այլ կերպ չէի կարող, հնարավոր չէր... մեզ մոտ ամեն օր զորահավաք է ճանապարհին, մետրոյում, կայարաններում, ամեն տեղից հավաքում են տղամարդկանց...

- Մուսա ես ասում, - Արամը համարյա գոռում էր, - սու՛տ ես ասում, դուք թուրք շները, ձեր ողջ կյանքում մեզ խաբում էիք, օգտագործում մեր դուրսհանալուսությունը: Մուսա, դու չափուի գայի... դու, քո օձ ընկերները, քո մուսուլման «մեծամեծերը», երեկ քիչ էր մնում սպանելիք մորս... - ձայնը դողաց, աչքերը լցվեցին արցունքով, - հիշու՞մ ես մորս, նրան, որ աղ ու հացով դիմավորեց թեզ երբ մեզ հյուրընկալեցիր, համուրեց ճակատող, ասաց որդիս, - Արցունքներն ու կատաղությունը խեղդում էին կոկորդը, խանգարում խոսելուն, - Դուք երեկ ավերել եք իմ տունը,

ին պապական, հայրական օջախը. ես այլևս տուն չունեմ, մայրս հոսպիտալում կյանքի ու մահվան պայքար է տանում... հասկանում եմ, հա՛ հասկանում եմ, ես քեզ հետ եմ... իժի- ծնունդներ...- Արամը բարձր հեկեկում էր,- ես հիմա ի՞նչ անեմ քեզ հետ, քի՛չ էր տառապանքս, դու էլ եկար, հենց միայն ի՞նձ պետք է հանդիպեիր...

-Արամ... ոտքս... Արամը խոր շունչ քաշեց, նայեց իր առաջ անօգնական ընկած վաղեմի ընկերոջն ու այսօրվա ակտիվացիան, եւ սիրտը ցավից ճնկվեց: Մուսան է, իր ընկերը, որի հետ աղ ու հաց են կիսել, երազանքներ փայփայել, իս հիմա ընկած է վիրավոր, արյունաթաթախ եւ օգնություն է խնդրում: Գրպանում վիրակապի կտոր կար: Հանեց ու փորձեց կապել վերքը:

-Այս ծանր տարիների ընթացքում ես շատ հաճախ էի հիշում քեզ, մեր գրույցները, մեր անցն ու դարձը... Արամ, ես չէի գա, եթե դա ինչ որ ձեռով հնարավոր լիներ...- ցավից դեմքը կնճռոտեց, հետո ճիգ գործադրելով մի քիչ բարձրացավ տեղից,- Մենք ետ դառնալու, փախուստի դիմելու միջոց չունենք, ետ դառնողներին գնդակահարում են հենց մարտադաշտում, դուք այդ մասին երեւի գիտեք, նկատել եք,- աչքերը արցունքոտ էին, աղերսանքով լեցուն,- Օգնիր ինձ, Արամ, հանուն այն օրերի, Լեյլան, երկու բալիկներս սպասում են... Լեյլան այդպես էլ չհաշտվեց այն մտքի հետ, որ մենք պատերազմում ենք...

-Երկու բալիկներ,- Արամը հանկարծ ժպտաց,- երկվորյակ տղաներ են ի՞նչ է, ինչպես երագում էիր:

-Հա, երկվորյակ են, բայց աղջիկներ են, երեքական տարեկան, ես երդվել էի նրանց, որ կվերադառնամ...

-Երեխաներն ի՞նչ մեղք ունեն, աստված իմ...-Արամի աչքերը արցունքոտեցին եւ հանկարծ մի բան հիշածի պես, դեմքը խոժոռեց,- Տեսնես ինչպե՛ս է մայրս... մայրս ինձ չի ների, եթե...Աստված իմ... Ասում են Լեյլան ու բալիկները սպասում են... ի՞նչ մեղք ունեն նրանք, թեկուզ... Չէ, չէ, չեմ ուզում խոսել թեկուզի մասին:

* * *

Երեք օր անց, կանաչող դաշտի մի ծայրին մոտեցան երկու հոգի՝ մեկը կաղում էր, մյուսը խոժոռ հայացքը հառել էր նրան: Երկուսն էլ լուռ էին: Արեւը կամաց սահեց սարերի հետեւը, մութը փռեց իր թելերը: Խրամատից մեկը սուլեց: Երկու տղամարդիկ մոտեցան. Մթույթան մեջ երկու ձեռքեր սեղմվեցին. մեկը անուր, երախտագիտությամբ լեցուն, մյուսը վախվորած, սակայն հոգեպես վեհացած: Կաղացող տղամարդը մի քանի քայլ առաջ անցավ, կանգնեց, ետ նայեց ու կրկին շարունակեց ճանապարհը. եւ պետք է անցներ դաշտի մյուս ծայրը, յուրայինների մոտ: Երեք օր առաջ այդ մի կտոր դաշտում կյանքի ու մահվան պայքար էր գնում, երեք օր առաջ այստեղ արկ ու ականներ էին պայթում, ցավն ու մահն էր շրջում այստեղ... Մի քանի քայլ եւս ու նա կանհետանա հորիզոնի մեջ, ահա, ահա... Վերջ: Վերջ: Ինչ որ տեղից կրակոցի ձայներ լսվեցին, հետո մթույթան մեջ ակնա պայթեց, հետո մեկը, կարծես թե, բան սասց հեռվից... ու զիջերային անդորրը խաթարվեց ինչ որ բանից վախեցած բլի կռիւնչից:

(Շարունակություն 2 եւ վերջ)

Ժամանց

1- Ուրախ անկյուն

ՄԻԱՄԻՏՑ ԶԵՎԱՆԱԼՈՎ

Արգելված վայրերում ձուկ որսալիս, հսկիչը բռնեց Վարդանիկի թելից:

- Ես ի՞նչ ես անում:
- Հեչ, ճիճուս կլողցնես:

ԸՆԶԻ ԻՆՔԸ ԶԻՂԵ՝

- Մա, աշէ, եմ մարդը քյաչալ է,- ասաց

Վարդանիկը:

- Մուս, ամոթ է, կլսի,- սաստեց մայրը:
- Ընչի ինքը չիղե՝ օր քյաչալ է:

ՄՈՐ ՊԱՏԱՍԻԱՆԸ

Վարդանիկը տուն է մտնում, տեսնում մայրը թանկարժեք մուշտակը հագին պտտվում է հայելու դիմաց:

- Մա, բարով մաշես, պապան է առե՞լ:
- Հողս պապայիդ գլխին, ինոր հույսին մնայի, դուն էլ չէիր էղնի,- պատասխանում է մայրը:

ԹՈՂ ՏՈՒՆԸ ԾԽԵ

Ընկեր մարզոց դպրոց է կանչում Վարդանիկի հորը եւ դժգոհում:

- Վարդանիկը դպրոցում ծխում է:
- Ես իրան հագար անգամ եմ ըսե՛լ, թող տունը ծխե...

ՊԱՊՈՆՑ ՏՈՒՆ

Հայրը դիմեց Վարդանիկին.

- Ծո, մերդ ուր՞ է գնացել:
- Պա, երկու ժամ առաջ հինգ թուփով գնաց պապոնց տուն:

2- Արդյոք գիտե՞ք

-Եթե խաշուկ փրփուրը իջել է հատակը, նրա վրա պետք է լցնել մի քիչ սոռը ջուր:

-Որպեսզի խաշուն ստացվի թունդ ու յուղալի, միսը պետք է գցել սառը ջրի մեջ:

Երկրորդ կերակրատեսակի պատրաստման համար միսը դարսում են եռացրած ջրի մեջ, որպեսզի մնա ավելի հյութալի:

-Եռման ժամանակ առաջացած փրփուրը հանում են նրա համար, որպեսզի խաշուն պարզ (թափանցիկ) լինի, դրանով նրա սննդարար գնահատականը չի փոխվում: Սպիտակուցների կորուստները չեն գերազանցում 0,2-0,3 գրամ, երբ 1կգ միսը եփում ենք 2-3լ ջրում:

3. ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

1-Այն ի՞նչ գունդ է անդունդում, Որ պտտվում անդադար, Ստեղծում է ու քանդում Իր համար ու մեզ համար::

2- Վագում է՝ վազան չէ, Խեղդում է՝ գազան չէ,

Փայլում է՝ փայլակ չէ,

Տանում է՝ սայլակ չէ:

3- Գնա~գ-գնա~գ, տարա~վ- տարա~վ, Տեղ հասավ, բայց դադար չառավ:

4-Ինչ՞ ձագեր են անվերջ գալիս, Իրենց մեծ մորը կուրծք տալիս:

5-Արծաթափայլ մի գզրոց է, Արեւը ուզում է բանալ, Լուսինը ձգնում է գոցել:

Պատասխան.1-երկիր 2-գետ 3-գետ 4-գետեր-ծովեր 5- սառույց

Առողջապահական

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԴԵՂԱՏՈՄՍԵՐ

Չվի դեղնուցն ու սպիտակուցն մեկտեղ հարել եւ քսել մարմնի այրված մասին:

Ցրտահարվածությունը բուժելու համար անհրաժեշտ է 150-200 գրամ չոր նեխուրը լցնել 1 լիտր ջրում, եփել: Այնուհետեւ ծայրանդամները պահել եփուկի մեջ մինչեւ նրա լրիվ սառելը: Հետո ծայրանդամները ողողել սառը ջրով եւ պահել սազի ճարպի հաստ շերտով: Անհրաժեշտ է ամեն երեկո ճարպը սրբել:

Ընդհանուր ցրտահարությունը բուժելու համար հիվանդին պատկեցնել 25 աստիճան տաք ջրով լցված լոգարանում եւ 15-20 րոպեի ընթացքում ջրի ջերմաստիճանը բարձրացնել մինչեւ 36-37 աստիճան: Այս ջերմաստիճանը պահպանելով հանդերձ, եռանդուն մերսել հիվանդի ամբողջ մարմինը: Չարկերակն ու մարմնի ջերմաստիճանը կանոնավորելուց հետո հիվանդին հանել լոգարանից, պառկեցնել անկողնում եւ ջերմակներ դնել:

Մարմնի առանձին մասերը ցրտահարվելու դեպքում խորհուրդ է տրվում օգտագործել սառը ջրով կոմպրեսը: Մառյան թրթիւ սառը ջրով, քամել, դնել մարմնի ցրտահարված մասի վրա եւ ապա մոմաթով ծածկելուց հետո, կապել: Այդ վիճակում թողնել 10-12 ժամ:

Սկնոռի (չիբան) բուժելու համար գլուխ սոխը խորովել, կտրել, տաք շերտը դնել սկնոռի վրա ու կապել: Չորս ժամը մեկ փոխել վիրակապը: